

«ՓԻՒՆԻԿԵԱՆ ԱՓԵՐԷՆ» ԳԻՐՔԻՍ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԷՆ ՏՊԱԲՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՍ

Posted on April 10, 2023 by Keghart




Category: [Opinions](#)



Դոկտ. Մինաս Գոճայեան, Լոս Անճելըս, 30 Մարտ 2023

Մարտ 23-ին վերջապէս տեղի ունեցաւ վերոյիշեալ գրքի շնորհանդէս-գինեծօնը Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ԱՄՆ-ի Արեւմտեան Թեմի Առաջնորդարանի «Համբար» սրահին մէջ: Սրահը լեփ-լեցուն էր: Ներկայ էր Թեմի Առաջնորդ Տ. Յովնան Արք. Տերտերեանը, ընկերակցութեամբ արժանապատիւ քահանայ հայրերու, ներկայ էին ազգային մարմիններու ներկայացուցիչներ, ազգականներ, պաշտօնակիցներ, ՌԱԿ-ի անդամներ եւ համակիրներ, գրասերներ եւ կարեւոր թիւով նաեւ նախկին աշակերտ-աշակերտուհիներ Մելգոնեան Կրթական Հաստատութենէն եւ Մանուկեան-Տեմիրճեան վարժարանէն:



Հանդիսութեան հովանաւորն էր Առաջնորդ Սրբազան Հայրը, կազմակերպողը՝ ՌԱԿ Արեւմտեան ԱՄՆի Շրջանային Վարչութիւնը, կը մասնակցէին նաեւ առաջնորդարանի «Չուարթնոց» յանձնախումբը, ՄԿՀ Շրջանաւարտից Միութիւնն ու «Չորք-Մարգպանի Հայր. Միութիւն»ը:

Օրուան փորձառու հանդիսավարուհին էր Օրդ. Լորա Գույումճեան, որ ներկայացուց կենսագրութեանս համառօտ գիծերը եւ գրքի նպատակն ու գրական արժէքը: «Չուարթնոց»ի կողմէն ելոյթ ունեցաւ ատենապետը՝ Բժ. Սիմոն Սիմոնեանը, որ դասընկերս եղած է ՀԲԸՄ-ի Յովակիմեան-Մանուկեան Մանչերու Երկր. Վարժարանին մէջ: Ան լաւ կը ճանչնար զիս եւ իրեն յատուկ մեկնաբանութեամբ ընդգծեց գրքիս

ազգային-հասարակական արժէքը եւ արտայայտուեցաւ նաեւ յատկապէս ԱՄՆ-ի հայկական դպրոցներու դիմագրաւած դժուարութիւններուն ու վիճակին մասին: ՌԱԿ-ի կողմէ հանդէս եկաւ Բժ. Ռաֆֆի Պալեան, որ գնահատեց իմ կրթական, ազգային-հասարակական եւ գրական-խմբագրական գործունեութիւնս յատկապէս ընդգծելով այն կարեւորութիւնը, որ ընծայած եմ լիբանանահայ համայնքին եւ լիբանանեան հայրենիքին:

Մեծ տպաւորութիւն թողուց վրաս կարճ ատենուան մը համար պաշտօնակիցս եղած Յովհաննէս Սրկ. Գումրուեանի ներկայացումը: Ան 16 վայրկեաններու մէջ կրցաւ ներկայացնել հատորին երեք մասերը եւ անոնց առանձնայատկութիւններն ու կարեւորութիւնը ապագայ պատմաբանին համար, եթէ պետք ունենայ ակելի լաւ հասկնալու 1940-70-ական թուականներու լիբանանահայութեան ապրած վերելքն ու իղծերը: Ըստ Յ. Գումրուեանի ներկայացուող գիրքը իւրայատուկ հայելի մըն է, ուր կարօտի, թախիծի քողին ետեւ հեղինակը կը վերապրի անցեալի յուշերը, հայկական թաղերու եւ մարդոց կենցաղը, անոնց սերը ուսման ու հայրենիքի հանդէպ: Անկեղծօրէն ես շատ տպաւորուած եմ իր բանասիրական հմուտ վերլուծութեամբ եւ իմ ու մեր սերունդի հոգիին խորքը թափանցելու իր հմտութեամբ:

«Մեր թաղերու ժողովրդային համալսարանը եւ այլ բաներ» ակնարկէն հատուածներ ընթերցեց հրատարակութեան սրբագրիչ տիկինս՝ Նազիկը, նոյնպէս բանասեր եւ երկարամեայ ուսուցչուհի: Հրամցուած հատուածը մեր թաղերու յայտնի վարսակիրանոց-գրադարանի՝ «Սամի Կարօ»ի մասին էր՝ անցեալի տխրաթախիծ եւ անոյշ ու հայաբոյր օրերու նուիրուած ակնարկ մը:

Դաշնամուրային երկու կատարումներ՝ Կոմիտասէն եւ Շոփէնէն, ստեղծեցին կարօտի մթնոլորտ մը, որ յատուկ է իմ գիրքիս, որովհետեւ բազմաթիւ ակնարկներու եւ պատմուածքներու մէջ առկայ է այդ զգացումը: Դաշնակահարուհի Արմինէ Ղազարեան կատարելապէս կրցաւ փոխանցել այդ մթնոլորտը:

Գերշ. Տ. Յովնան Արք. Տերտերեանի խօսքը դիպուկ էր եւ տեղին: Ան ոչ միայն գնահատեց վէպիս գրական եւ ազգային-դաստիարակչական նշանակութիւնը, այլեւ զիս՝ իբրեւ տարիներու մանկավարժ, լրագրող եւ գործիչ:

Խառն խոհերու մէջ էի ամբողջ հանդիսութեան ընթացքին: Հպարտ էի որ սրահը նստելու տեղ չկար եւ ներկաները անձանձրոյթ կը հետեւէին: Ելոյթները կարճ էին եւ բովանդակալից, մթնոլորտը դրական էր եւ կարօտով ու թախիծով լի հանդէպ Լիբանանին ու առհասարակ Միջին Արեւելքին: Շնորհաւորական խօսքերը անկեղծ էին, արհեստական ու շինծու բան չկար: Ամէնէն կարեւորը՝ ներկայ էին իմ պաշտօնակիցներես շատեր եւ նախկին աշակերտ-աշակերտուհիներ, որոնց համար ես մնացեր էի «նոյն Պարոն Գոճայեանը...»:



ամոզուեցայ թէ մեր ընթերցասեր սերունդը, որ թէեւ ԱՄՆ կ'ապրի տասնամեակներէ ի վեր, սակայն հոգւով ու սրտով կապուած է ծննդավայրին, այս պարագային՝ Լիբանանին, որ այսօր կը տառապի տեղական արհմարտի եւ գիշատիչ ֆեոդալներու եւ միջազգային կասերապաշտութեան ու սիոնիզմի ճիրաններուն տակ:

Նուիրատուութիւնները ա՛լ աւելի սիրտ տուին ինձի, որովհետեւ նիւթական հասոյթը մտադրած եմ անձամբ, սուսիկ-փուսիկ յանձնել իմ ճակատագրիս ենթարկուած հայերէնի ուսուցիչներուն եւ թոշակառուներուն: Ուրախ եմ նաեւ որ ամէնէն երիտասարդ ներկաներէն երկուքը ութը եւ երեք տարեկան թոռնուհիներս էին, որոնք մնացին... մինչեւ վերջ:

Տխուր եմ եւ միշտ մտահոգ, որովհետեւ այս եւ նման հայալեզու, նոյնիսկ անգլերէն ձեռնարկներուն, հանդիսութիւններուն կամ միջոցառումներուն ԲԱՅԱՐՁԱԿԱՊԵՍ բացակայ է նոր սերունդը՝ 30-50 տարեկան: Յո՞ երթաս ամերիկահայ սերունդ: Ամենայն դէպս յոյսով կը սպասեմ նոր սերունդի «հրաշալի յարութեան»:

Շնորհակալ եմ բոլոր կազմակերպիչներուն, յայտագրին մէջ մաս ունեցողներուն, ներկաներուն, ինձի ուղղուած քաջալերական խօսքերուն, անկեղծ գնահատանքներուն եւ յատկապէս Առաջնորդ Սրբազան Հօր՝ իր անսակարկ զօրակցութեան համար:

There are no comments yet.